ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2018 թվականի N 583 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին մասնակցելու նպատակով 2018 թվականի մայիսի 31-ից մինչև հունիսի 1-ը Տաջիկստանի Հանրապետություն (Դուշանբե) գործուղել պատվիրակություն՝ համաձայն հավելվածի:

2. Պատվիրակության՝ Տաջիկստանի Հանրապետություն (Դուշանբե) գործուղման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պաշտոնական պավիրակությունների սպասարկման սրահի և Դուշանբեի օդանավակայանի սպասարկման սրահի, ներկայացուցչական, փոխադրամիջոցների վարձակալման և հուշանվերների ձեռքբերման հետ կապված ծախսերը՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի, կատարել՝

1) Արարատ Միրզոյանինը, Մհեր Գրիգորյանինը, Վահան Կոստանյանինը, Սյուզաննա Ավետիսյանինը, Կարպիս Փաշոյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի

պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պահ-պանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

2) Արծվիկ Մինասյանինը, Հակոբ Արշակյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

3) Շավարշ Քոչարյանինը, Արմեն Ղևոնդյանինը՝ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոց-ների, իսկ Գևորգ Պետրոսյանինը և Արտակ Կարապետյանինը՝ Արտաքին գործերի նախա-րարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության միջոցների հաշվին.

4) զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչների օդանավակայաններում սպասարկման ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներկայացրած հաշվետվության:

3. Ընդունել ի գիտություն, որ զանգվածային լրատվական միջոցների ներկայացու-ցիչների գիշերավարձը և օրապահիկը կատարվելու են համապատասխան գործուղվող կազմակերպությունների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ կազ-մակերպել հատուկ ինքնաթիռի չվերթ՝ 2018 թվականի մայիսի 31-ին՝ Երևան-Դուշանբե, իսկ հունիսի 1-ին՝ Դուշանբե-Երևան երթուղով:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի պետին՝ աջակցել Հայաստանի Հանրա-պետության վարչապետի աշխատակազմին՝ սույն որոշման 5-րդ կետում նշված չվերթի կազմակերպման հարցում:

6. Հատուկ ինքնաթիռի չվերթի կազմակերպման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

7. Արտաքին գործերի նախարարին՝ լուծել պատվիրակության՝ Տաջիկստանի Հանրապետություն (Դուշանբե) մեկնելու հետ կապված հարցերը:

8. Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում պատվիրակության՝ Դուշանբե գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. մայիսի 29
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
մայիսի 29 -ի N 583 – Ա
որոշման

Կ Ա Զ Մ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԴՈՒՇԱՆԲԵ) ԳՈՐԾՈՒՂՎՈՂ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Ա. Միրզոյան	- ՀՀ առաջին փոխվարչապետ
Մ. Գրիգորյան	- ՀՀ փոխվարչապետ
Ա. Մինասյան	- Տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
Հ. Արշակյան	- Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ
Շ. Քոչարյան	- Արտաքին գործերի նախարարի տեղակալ
Օ. Եսայան	- Բելառուսի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան, ԱՊՀ կանոնադրական և այլ մարմիններում ՀՀ մշտական լիազոր ներկայացուցիչ
Վ. Բաղալյան	- Տաջիկստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
Վ. Տողանյան	- ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
Ա. Ղևոնդյան	- Արտաքին գործերի նախարարի խորհրդական, Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ԱՊՀ վարչության պետի պաշտոնակատար
Վ. Կոստանյան	- ՀՀ առաջին փոխվարչապետի գրասենյակի ղեկավար
Կ. Փաշինյան	- ՀՀ առաջին փոխվարչապետի մամուլի քարտուղար
Ս. Ավետիսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ
Գ. Պետրոսյան	- Արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պետի տեղակալ (27.05.2018-01.06.2018)

Ա. Կարապետյան - Արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության խորհրդական (27.05.2018-01.06.2018)

Շ. Գալստյան - «Փակտոր» տեղեկատվական կենտրոնի թղթակից (համաձայնությամբ)

Ա. Դեվրիկյան - «Փակտոր» տեղեկատվական կենտրոնի օպերատոր (համաձայնությամբ)

Մ. Խաչատրյան - Հայաստանի հանրային հեռուստաընկերության թղթակից (համաձայնությամբ)

Է. Դավթյան - Հայաստանի հանրային հեռուստաընկերության օպերատոր (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ